

## Ընդհանուր մարտահրավերներ և մասնավոր լուծումներ

Օդի աղտոտումը չի պարփակվում պետական սահմաններում: Վտանգավոր աղտոտիչների մանր մասնիկները հաճախ տեղափոխվում են մեծ հեռավորությունների վրա, սպառնալով սկզբնաղբյուրից բավական հեռու գտնվող տարածքներին:

Նախագծի յոթ գործընկեր երկրներից յուրաքանչյուրում կան օդի աղտոտվածության հետ կապված լուրջ մարտահրավերներ: Սակայն ազտոտվածության գրանցվող մակարդակը կարող է չհամապատասխանել իրական մակարդակին, քանի որ առկա մշտադիտարկման համակարգերը արդիական չեն, կամ դրանք քանակը անբավարար է ճշգրիտ գնահատում ապահովելու համար:

Տեղական օրենսդրությունը հաճախ տարբերվում է Եվրոմիության ստանդարտներից և բազմակողմանի պայմանագրերը միշտ չէ, որ կյանքի են կոչվում: Չնայած բոլոր յոթ երկրները վավերացրել են Մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտվածության ՄԱԿ ԵՏՀ կոնվենցիան, վերջինիս ուղղորդող միայն մի քանի արձանագրություններ են ներկայումս վավերացված:

Տեղական օրենսդրությունը ԵՄ ստանդարտներին մոտարկելը պայմանագրերի կատարումն ապահովելու համար և օդի որակի մշտադիտարկման համակարգերի բարելավումը ընդհանուր մարտահրավերներ, որոնք այդ երկրները պետք է հաղթահարեն որպես ազգային առաջնահերթություն:

*Սյու նախագիծը իրականացվում է MWH*

*Կոնսորցիումի կողմից:*

*Հրապարակման մեջ արտահայտված տեսակետները անպայման չէ, որ արտահայտում են Եվրոպական*

*Հանձնաժողովի տեսակետները*

## Նախագծի տևողությունը

48 ամիս՝ 2011թ. հունվարից մինչև 2014թ. դեկտեմբեր

## Գործընկեր երկրներն են

Հայաստանը



Ադրբեջանը

Բելառուսը




Վրաստանը

Սլովակիան



Ռուսաստանը

Ուկրաինան



### Նախագծի գրասենյակը

7/1 Ակադեմիկա Քոզմուցա #101

Կին, Ուկրաինա ,01024

Հեռ. +380-44-253-2343

Ֆաքս. +380-44-253-0247

Էլ. փոստ. [lubomyr.markevych@airgoaernance.org](mailto:lubomyr.markevych@airgoaernance.org)

Դուք կարող եք նաև կապվել ազգային համակարգողների հետ.

**Հայաստան**՝ Պետրոս Թոզալաքյան. [tozalakyan@mail.ru](mailto:tozalakyan@mail.ru)

**Ադրբեջան**՝ Իսլամ Մուստաֆաեվ. [imustafayev@mail.ru](mailto:imustafayev@mail.ru)

**Բելառուս**՝ Ալեգ Սիվազրակաու. [sivagrak@yahoo.com](mailto:sivagrak@yahoo.com)

**Վրաստան**՝ Նինո Շավգուլիձե. [nino.shavgulidze@cenn.org](mailto:nino.shavgulidze@cenn.org)

**Սլովակիա**՝ Ռոդիկա Նեգուա. [rodicanegura@gmail.com](mailto:rodicanegura@gmail.com)

**Ռուսաստանի Դաշնություն**՝ Ալեքսանդր Սոլովյանով. [solovyanov@mail.ru](mailto:solovyanov@mail.ru)

**Ուկրաինա**՝ Կիրիլ Սերեդա. [kyryl\\_sereda@hotmail.com](mailto:kyryl_sereda@hotmail.com)

# ՕԴԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒ Մ ԵՇԳԳ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ



Նագիծը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից

Նախագիծն հրակայնագնում են



## Նախագծի մասին

Արդյունաբերությունը և տրանսպորտը օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են: Փորձը ցույց է տալիս, որ արտանետումների նվազմանը հնարավոր է հասնել մաքուր տեխնոլոգիաների ներմուծումով, երթևեկության հոսքերի լավ պլանավորմամբ և կարգավորող լավ համակարգերի ներդրմամբ:

Նախագիծը ներառում է **ուսուցման ծրագիր և ուսուցողական այցելություններ**, որոնք պետք է հեշտացնեն ցանցերի ստեղծումը և խրախուսեն տարածաշրջանային համագործակցությունը, մինևույն ժամանակ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի անհատական կարիքները: Հատուկ առաջնահերթության ոլորտները նույնականացվել են յուրաքանչյուր երկրի կողմից, որը հիմք է ծառայել մի շարք ցուցադրական ծրագրերի մշակման և իրականացման համար:

Լավագույն փորձի ներմուծումը նախագծի գլխավոր խնդիրն է: Այս նպատակին հասնելու համար նախագիծը կստեղծի միասին աշխատելու և փորձի փոխանակման նպաստավոր միջավայր **մասնագետների և փորձագետների, քաղաքականություն ձևավորողների, կառավարական պաշտոնյաների և գործարար շրջանների** համար:

Սակայն օդի որակի բարելավման ոչ մի քաղաքականություն հաջողության չի հասնի, առանց **լայն հասարակության** աջակցության ու մասնակցության: Երբեմն որևէ մեկի դիրքորոշման և կենսակերպի փոփոխությունը՝ օրինակ, հարմարավետ մեքենայի փոխարինումը հեծանվով կամ գոնե էկոլոգիապես մաքուր ավտոմեքենայով, ավելի դժվար է, քան նոր օրենսդրության ստեղծումը: Համապատասխանաբար հանրային իրազեկման բարձրացումը նախագծի հիմնական նպատակներից մեկն է. բարելավել օդի որակի մասին տեղեկատվության ստացման հանրային մատչելիությունը, կամ քայլեր կատարել այդպիսի բարելավման ուղղությամբ:

## Նախագծի բաղադրիչներն ու գործունեությունը

### Օդի որակի գնահատում և կառավարում

- Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների խթանում
- Օդի որակի մոդելավորման ժամանակակից գործիքների ստեղծում
- Համալիր անալիտիկական մոդելների կիրառում
- Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում

### Արդյունաբերություն, համալիր աղտոտման կանխարգելում և կարգավորում (IPPC)

- Համալիր թույլատվությունների կիրառումը
- Աջակցություն լավագույն հասանելի տեխնոլոգիաներին
- Արտանետումների սահմանային արժեքների մշակում

### Տրանսպորտ

- Օրենսդրական և կարգավարող համակարգերի կիրառում, երթևեկության ժամանակակից պլանավորում, վառելիքի որակ և ցածր արտանետումներ
- Հասարակական տրանսպորտից օգտվելու խթանում և հասարակության վերաբերմունքի փոփոխություն, մասնավորապես տրանսպորտային այլընտրանքների նկատմամբ



Եվրոպական Միությունը կազմված է 28 անդամ պետություններից, որոնք որոշել են աստիճանաբար միավորել իրենց գիտելիքները, ռեսուրսները և ճակատագրերը: Ընդլայնման 50 տարիների ընթացքում նրանք միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի, միաժամանակ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները:

Եվրոպական Միությունը որոշել է կիսել իր ձեռքբերումները և արժեքները, իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

